

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼՈՒՆՅՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ

Տարիների ընդմիջումից հետո, Հայաստանում 1941 թվականին նորից կազմավորվեց սիմֆոնիկ նվագախումբ: Այս անգամ այն ընդգրկվեց Հայֆիլ-հարմոնիայի կազմում, որը համերգային գործակալություն էր (նախորդ տարիներին նվագախումբը ներկայանում էր որպես կոմսերվատորիայի, ապա օպերային թատրոնի նվագախումբ): 1945-ին՝ Մ.Մալունցյանի¹ ղեկավարությամբ, նույն այս նվագախումբը ստացավ պետական կարգավիճակ: Այս անգամ մշակութային կարևոր այս իրադարձության աջակիցը եղավ Գրիգորի Դոմբաևը²:

Սիմֆոնիկ նվագախմբի 15-16 տարիների գեղարվեստական ղեկավար, դիրիժոր, երաժշտական հասարակական գործիչ Միքայել Մալունցյանի շնորհիվ նվագախումբը ծաղկում ապրեց՝ դառնալով հորհրդային միության առաջատարներից ու հեղինակավորներից:

Դեռևս 20-ական թվականներին Մ.Մալունցյանը հանդես է եկել որպես մենակատար թավջութակահար, որը Հայաստանում (մասնավորապես Երևանում) ելույթներ է ունեցել նաև կոմսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ:

Տաղանդավոր երաժիշտ լինելուց զատ Մալունցյանը նաև հմուտ մանկավարժ էր, վառ անհատականություն: Կոմսերվատորիայում և Պրոֆ-երաժշտական դպրոցում³ աշխատանքի հետ մեկտեղ նա ուսանում էր Երևանի պետհամալսարանի սոցիալ-տնտեսական բաժնում: Այստեղ նա շփվել է հայ գիտության ու գրականության հսկաներ Թադևոս Ավդալբեկյանի, Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի հետ, նաև գրի առել նրանց ասույթներն ու մտքերն իր նոթատետրում:

Պրոֆեսիոնալ նվագախումբ ունեցող հանրապետությանն անհրաժեշտ էին նաև պրոֆեսիոնալ դիրիժորներ և Հայաստանի լուսավորության

Ժողկոմիսարիատը նրան գործուղում է Մոսկվայի կոմսերվատորիա ուսումնառության: Մեկ տարի անց դիրիժորության դասարանի ղեկավար Լ.Գինգբուրգը վստահում է իր սանին Մոսկվայի կոմսերվատորիայի և համամիութենական ռադիոյի և նվագախմբերի հետ համերգները: Կոմսերվատորիայի դիրիժորության ամբիոնի վարիչ Աբրահամ Յամպոլսկին 1932 թվին գրել է. «Մոսկվայի պետկոմսերվատորիայի դիրիժորության բաժնի ուսանող Միքայել Մալունցյանը դիրիժորական գերազանց տվյալներ, երաժշտական կուլտուրա և շատ լավ ճաշակ ունի: 1931-1932 ուսումնական տարում Մալունցյանը բեղմնավոր լարված աշխատանք է կատարել: Հիանալի է վարել սիմֆոնիկ երաժշտության երկու համերգ՝ կոմսերվատորիայի փոքր դահլիճում և Ժելեզնովոդսկում»⁴:

Տաղանդավոր, երիտասարդ դիրիժոր՝ Մ.Մալունցյանը, ուսումնառությանը զուգահեռ աշխատում է Մոսկվայի կոմսերվատորիայի օպերային ստուդիայում և հաջորդ՝ 1935 թվին Ստանիսլավ Շաքլու անվան օպերային ստուդիայում բեմադրում Ռիմսկի-Կորսակովի «Ձյունանուշ» օպերան: 1936-ին՝ որպես դիպլոմային աշխատանք ղեկավարելով Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն», Պուչինիի «Բոհեմ» և Ղարզոմիժսկու «Ջրահարսը» օպերաները, գերազանց ավարտելով Մոսկվայի կոմսերվատորիան, Միքայել Մալունցյանն ստանում է «երաժշտական արվեստի գործիչ» տիտղոսը:

Շարունակելով Մոսկվայի կոմսերվատորիայի օպերային ստուդիայում աշխատանքը, 1937-ից զուգահեռաբար ղեկավարում է կոմսերվատորիային առընթեր երաժշտական ուսումնարանի նվագախմբային և օպերային դասարանները:

1945 թվականի նոյեմբերի 16-ին կայացավ հայֆիլհարմոնիայի պետական սիմֆոնիկ նվագախմբի անդրամիկ համերգը՝ Մ.Մալունցյանի ղեկավարությամբ, մենակատարներն էին Հայկանուշ Դանիելյանը, Դավիթ Պողոսյանը, Ալեքսանդր Դոլուխանյանը: Առաջին համերգին հնչեցին Ա.Սպենդիարյանի, Ռ.Ստեփանյանի, Ա.Դոլուխանյանի, Ա.Խուդոյանի ստեղծագործությունները:

Միքայել Մալունցյանի ղեկավարությամբ կայացած առաջին համերգը՝ 1945թ. նոյեմբերի 16-ին, մեծ ջանասիրությամբ նախապատրաստվեց, գրեթե

երեք և կես ամիսների ընթացքում: Անհրաժեշտ է նշել և այդ ժամանակի նվազախմբի կոնցերտմայստրը Վիտոլդ Պորտուգալուվի պրոֆեսիոնալ աշխատանքը, որը դիրիժորի աջ թևն էր, անփոխարինելի օգնականն ու բարեկամը: Անդրանիկ համերգը, որ նվիրված էր Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 25-ամյակին լայն արձագանք գտավ թե՛ երաժշտասերների ու մասնագետների շրջանում, թե՛ մամուլի էջերում:

Մ.Սալունցյանի ղեկավարությամբ ստեղծվեց աշխատանքային հատուկ ռեժիմ, որն ապահովում էր մեթոդական-դաստիարակչական բազմաթիվ նոր սկզբունքներ ու ձևեր: Նա հատուկ ուշադրություն էր դարձնում նվազախմբում ընդգրկված ուսանողների դասերին ու նրանցից յուրաքանչյուրի առաջընթացին, իսկ նվազախմբի փորձերը համարվում էին ուսումնաարտադրական աշխատանք: Գլխավոր դիրիժորը պարբերաբար հետևում էր նվազախմբի յուրաքանչյուր երաժշտի կատարողական արվեստի առաջընթացին՝ ուսման և աշխատանքի արդյունավետ համատեղմանը:

Արդյունքը եղավ այն, որ գործունեության առաջին տարվա ընթացքում, Մ.Սալունցյանի ղեկավարությամբ նվազախումբը կատարեց Ա.Սպենդիարյանի, Ա.Խաչատրյանի Հ.Ստեփանյանի, Ա.Տեր-Ղևոնդյանի, Գ.Եղիազարյանի, Ա.Բաբաջանյանի, Ա.Հարությունյանի, Էդ.Միրզոյանի, Ա.Դուրխանյանի և հայ այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Դրանց կողքին նվազախմբի գոյության առաջին տարվա ծրագրերում ընդգրկվեցին Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի, Բրամսի, Վեբերի, Մենդելսոնի, Շուբերտի, Գրիգի, Գլինկայի, Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Բորոդինի, Մուսորգսկու, Ռախմանինովի ստեղծագործությունները:

Մալունցյանի հիմնական նպատակն էր Հայֆիլհարմոնիայի պետական սիմֆոնիկ նվազախմբի կատարողական մակարդակը հասցնել պատշաճ բարձրության, և իր ստեղծագործական ողջ էությանը նվիրվեց սիմֆոնիկ նվազախմբին: Եվ 15 տարիների ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվազախումբը փայլատակեց միութենական առաջնակարգ նվազախմբերի երկնականարում: Նվազախմբի գեղարվեստական ղեկավարը առանձնակի ուշադրություն էր հատկացնում հայ կոմպոզիտորներին, առաջին անգամ հնչեցնելով նրանցից շատերի գործերը՝ Ա.Հարությունյանի «Հայրենիք»

կանտատը, Վ.Կոտոյանի Ղաշնամուրի և նվագախմբի կոնցերտը, Էդ.Բաղդասարյանի «Սիմֆոնիկ պոեմը», Էդ.Միրզոյանի «Նախերգանքը», Ղ.Սարյանի «Սիմֆոնիկ պոեմը», Է.Հովհաննիսյանի Սիմֆոնիան, Ա.Խուդոյանի «Պատանեկություն» պոեմը, Ջ.Տեր-Թադևոսյանի «Քնարական պոեմը» և այլն:

Մ.Մալունցյանի ղեկավարած սիմֆոնիկ նվագախումբը համամիութենական լայն ճանաչման արժանացավ 1956թ. Մոսկվայում կայացած հայ արվեստի և գրականության տասնօրյակի շնորհիվ: Մոսկվայան խստապահանջ ունկնդրին ներկայացվեցին հատվածներ Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից, Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան, Ջութակի և նվագախմբի կոնցերտը, Գ.Եղիազարյանի «Բալետային երկրորդ սյուիտը», Ա.Բաբաջանյանի «Հերոսական բալլադը», Ա.Հարությունյանի «Տոնական նախերգանքը», Ղ.Սարյանի «Սիմֆոնիկ պատկերները», Է.Միրզոյանի «Սիմֆոնիկ նվագախմբի պոեմը», հատված Ա.Այվազյանի սյուիտից, Ա.Տեր-Ղևոնդյանի «Շքերթը», Է.Բաղդասարյանի և Ս.Ջրբաշյանի «1905 թիվ» պոեմը: Սիմֆոնիկ նվագախումբը Մոսկվայում կատարեց նաև Պ.Չայկովսկու Չորրորդ սիմֆոնիան: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգներին մասնակցում էին նաև դիրիժորներ Ի.Խարաջանյանը և Ա.Քաթանյանը, այն ժամանակ հանրապետության ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանը, վաստակավոր արտիստներ՝ Ա.Բաբաջանյանը և Գ.Վարդանյանը:

Նույն 1956 թվականի ապրիլի 2-ին հորեյրանական երեկոյով նշվեց Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի հիմնադրման 30-ամյակը՝ Մալունցյանի ղեկավարությամբ կատարվեց Ա.Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան: Մոսկվայան երաժշտասերների հետ Մ.Մալունցյանի դաստիարակած ու 15-տարի անփոփոխ ղեկավարած նվագախմբի հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ երկու տարի անց՝ 1958 թվի աշնանը:

1956 թվին իր 30-ամյակի օրերին Հայաստանի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբն ստացավ Արամ Խաչատրյանի մաղթանքներով և զնահատանքով հետևյալ նամակը⁵:

1945-1960թթ. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը իր զեղարվեստական ղեկավարի գլխավորությամբ հանրությանն է ներկայացնում

շուրջ 500 պարտիտուր, դրանցից շատերը Հայաստանում հնչեցնելով առաջին անգամ:

Այս տարիներին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես են եկել դիրիժորներ՝ Կ.Սարաջևը, Ս.Չարեքյանը, Ռ.Ստեփանյանը, Ա.Աբգարյանը, Ի.Խարաջանյանը, Օ.Ղուրյանը, Ս.Շաթիրյանը, Վ.Այվազյանը, Ա.Քաթանյանը, Ս.Ղազարյանը և այլն, սովետական դիրիժորներ՝ Ն.Անոսովը, Լ.Գինզբուրգը (Մ.Սալունցյանի ուսուցիչը – Ն.Թ.), Է.Գրիկուրովը, Օ.Դիմիտրիադին, Կ.Ջանդերլինգը, Կ.Ելիասբերգը, Կ.Կոնդրաշինը, Մ.Յամսոնը, Վ.Նեբուխինը, Մ.Պավերմանը, Ն.Ռաբինովիչը, Գ.Ռոժդեստովենսկին, Կ.Սիմեոնովը, Ա.Ստասևիչը և այլն: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համերգներ են ունեցել նաև արտասահմանցի դիրիժորներ՝ Լ.Բաչը (Ռումինիա), Ժ.Բոուդրին (Կանադա), Մ.Լերուն (Ֆրանսիա), Տ.Հաննիկայեն (Ֆինլանդիա), Պ.Կլեցկին (Շվեյցարիա), Ֆ.Կոնվիչին (Գերմանիա), Ա.Կորոդին, Դ.Նեմեթիը, Լ.Շոմոդին (Հունգարիա), Ս.Պոպովը, Վ.Սիմոնովը (Բուլղարիա), Կ.Սանտորոն (Բրազիլիա), Ռ.Սատանովսկին, Ե.Սեմկովը (Լեհաստան) Վ.Սնետաչեկը (Չեխոսլովակիա), Կ.Ցեկկին, Վ.Ֆերրերոն (Իտալիա), Մ.Ռեդան (Ճապոնիա):

Նվագախմբի հետ հյուրախաղերով հանդես են եկել արտասահմանցի երաժիշտներ՝ դաշնակահարներ Ա.Բարովան (Բուլղարիա), Ա.Շմիդտը (Գերմանիա), Մ.Բոյուշոբլին (Ֆրանսիա), Դե-Ռակոն (Արգենտինա), Ա.Կոստան (Պորտուգալիա), Տ.Հարությունյանը (Իրան), Ռ.Պետրոսյանը՝ (Ֆրանսիա), երգիչներ՝ Կ.Ջոբիանը, Ջ.Պալլին (Ռումինիա), Դ.Չիլեն (Գերմանիա), ջութակահար՝ Մ.Օկլերը (Ֆրանսիա):

15 տարիների երկար ու ձիգ բեղուն ու քրտնաջան, նվիրական աշխատանքն ընդհատվեց առաջին հայացքից անհեթեթ, սակայն և՛ նվագախմբի, և՛ իր արվեստի ծաղկման շրջանում գտնվող գեղարվեստական ղեկավարի համար ճակատագրական մի անկանխատեսելի դեպքով... Ավտովթարի պատճառով մարմնական վնասվածքներ ու ջարդվածքներ ստանալով, Հանրապետության ժողովրդական արտիստ, պրոֆեսոր, իր գործին անմնացորդ նվիրյալ Սիքայել Սալունցյանը գամվեց անկողնին երկար ժամանակով:

1960 թվականի ընթացքում, որպես համերգատու դիրիժորներ նրան փոխարինեցին Մարտին Ներսիսյանը, Արամ Քաթանյանը, Յուլի Արանովիչը,

Սուրեն Չարեքյանը, Յուրի Դավթյանը, Իսաիր Խարաջանյանը, Նուբար Սնգրյանը, Վահան Այվազյանը: Նույն տարեվերջին, ավելի հստակ նույեմբերի 5-ին, երկար սպասումից հետո Միքայել Մալունցյանը նորից կանգնեց իր նվազախմբի դիրիժորական վահանակի առջև, ղեկավարելով Չայկովսկու, Լեննկավալլոյի, Պուչինիի, Մասկանիի, Գրիգոր Եղիազարյանի, Ղազարոս Սարյանի, Ալեքսանդր Չարուբյունյանի ստեղծագործությունները: Իսկ մենակատարը Մոսկվաբնակ տենոր Լևոն Գեոխևյանն էր:

Կարծես թե ամեն ինչ վերադառնում էր իր տեղը, սակայն հաջորդ հանդիպումը սիրելի վարպետի, տաղանդավոր դիրիժորի հետ տեղի ունեցավ զրեթե մեկ տարի հետո՝ 1961-ի հոկտեմբերին, հետո ղեկտեմբերին: Նոր հանդիպումներ 1962-ի գարնանը, 1964թ. հունիսին:

¹ Միքայել Մալունցյան (1903-1978) 1925թ. ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիայի թավջութակի բաժինը (ղեկավար՝ Կ.Մինյար): 1935թ. ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիայի օպերային-սիմֆոնիկ դիրիժորության բաժինը (ղեկավար՝ Լ.Գինգբուրգ):

² Գրիգորի Դոմբաև (1905-1986) երաժշտագետ, դաշնակահար, երաժշտական-հասարակական գործիչ, մանկավարժ: Ռուսաստանի դաշնության արվեստի վաստակավոր գործիչ (1967): 1947-1949թթ. եղել է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի արվեստի գործերի վարչության պետ: 1950-ից դասավանդել է Գորկի քաղաքի կոնսերվատորիայում (1968-ից պրոֆեսոր, 1950-1972թթ.՝ ռեկտոր, կամերային անսամբլի ամբիոնի վարիչ), 1972-ից Գնեսինների անվան երաժշտա-մանկավարժական ակադեմիայում: «Պ.Ի. Չայկովսկու ստեղծագործությունը նյութերում և փաստաթղթերում» զրբի, ժամանակակից երաժշտական մշակույթի մասին հոդվածների հեղինակ է:

Барсамян А. Кафедра духовых инструментов Ергосконсерватории им.Комитаса // երաժշտական Հայստան N1, 2002 թ. 4

³ Այսոր Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոց

⁴ Պետրոսյան Մ. «Երեքը հայ դիրիժորներից» էջ. 77-78

⁵ Հարությունյան Մ. Հարությունյան Գ. «Արամ Խաչատրյան նամակներ» էջ 64: